

development of mankind, is being discussed in the context of achievements of the article: The significance of nationality and the role of worldview literacy in its development, are given a certain importance in this article. The individual responsibility of each citizen and the significance of continual self-education concerning to worldview in its realization, are strongly supported in the State Governance.

Keywords: worldview; anthropological principle; Armenian identity Preservation; national state; world-viewing self-education.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴՐԱԿԱՐԳԸ

Անահիտ Զիջյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

Ուսմիկ քոչարյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,

Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող

Սոցիալական աշխատանքն իր տարբեր հարանվանություններով և, սակայն, բովանդակությամբ նույնական իր մերձակա պաշտոնական մինչճանաշումի ու ետճանաշումի տարիներով հաշվառյալ՝ ունի առնվազն 120 տարվա (Անգլիայում՝ մոտ 200 տարվա) մասնագիտական պրակտիկ գործունեության փորձառություն։ Որպես մասնագիտական գործունեություն իր պաշտոնական ճանաշումից ի վեր սոցիալական աշխատանքի պրակտիկայի և տեսության, մասնագիտական գործունեության և ուսուցակարգի փոխհարաբերությունների նշանակալիությունը մշտապես ըննարկման «խնդրո նյութ» է զարգացած երկրներում՝ և՝ պրակտիկիներներ, և՝ տեսաբան հեղինակների աշխատություններում¹։ Այս խնդիրը ընա-խորհրդածության խնդրո առարկա է նաև ետխորհրդային պետություններում, որտեղ սոցիալական աշխատանքի հաստատակարգված ներկայությունը տեսական ու գործնական իր բաղադրիչներով հանդերձ համեմատաբար նոր, վերջին

¹ Steu Compton B. R. & Galaway B., Social work processes, 4 ed., Wadsworth Publishing Company, Belmont, California, 1999, ch. 2, McDonald C., Challenging social work, the institutional context of practice, Palgrave Macmillan, NY, 2006, էջ 4-8, Пейн М., Социальная работа: современные теории, М., 2007, էջ 11-81, Mattaini M., Lowery Ch. T. & Meyer C. H., The foundation of social work practice: A graduate text, NASW Press, Washington, 1998 և այլոր։

քառորդ դարի իրողություն է²: Լինելով մասնագիտական գործունեություն՝ ուղղված հասարակության խոցելի խմբերի կարիքային հիմնախնդիրների լուծմանն ու աջակցության կազմակերպմանը, սոցիալական աշխատանքում մոդելների ու սեփական տեսլունների զարգացման գործնթացը կապված է եղել պրակտիկ դաշտում առաջացող հիմնախնդիրների բացահայտման և, հաշվի առնելով հասարակությունում մշտապես ռեսուրսների սահմանափակության հարցը, դրանց հաղթահարման արդյունավետ ուղիների մշակման եւտ:

Սոցիալական աշխատանքում մարդկային ու մասնագիտական փորձառության զարգացման, փոխազդեցությունների ու միահյուսումների տեսական հասկացումները, ասել է թե՝ մոտեցումների ու մոդելների պատմականորեն կայացած ու այժմ ևս կայացող փոխներթափանցումների ու միահյուսությունների ընթացքն ու նաև դրա հասկացումը, նկատել են տալիս սոցիալական աշխատանքի դեպի իր խնդրո առարկան՝ կարիքավորությունը, առավել կազմակերպվելու, աղեկված և օպտիմալ դառնալու շարժը: Եվ իհարկե, նկատել են տալիս պատմականորեն այդկերպ կայացող շարժն անհրաժեշտորեն ինքնազիտակցելու և սոցիալական աշխատանքի խկության բացահայտմամբ՝ այն իրենում, իր տեսական ու գործականացող կազմակերպվածությունում ունենալու, պահելու ու պահպանելու և, այդպիսով, այլևս ոչ թե ակամա, այլ՝ զիտակցորեն նույնակերպ ու առավել կատարելազործվող շարժմամբ ընթանալու պիտոյականությունը: Իսկ ինքնահասկացումն ու իր խկության բացորոշումը և ըստ այդ խկության ներկայավորումը նրան հաստում է զիտության կարգում՝ տեսադաշտում ու իմաստում, հետագա կայացման նրա ընթացքը ծավալելով ու որոշակիացնելով այդ կարգավիճակիում:

Աստ՝ անհրաժեշտ է քննարկել մի շարք հարցեր: Ի՞նչ ենք հասկանում «խնդիր», «հիմնախնդիր» (պրոբլեմ) և ապա «սոցիալականորեն նշանակալի խնդիր կամ հիմնախնդիր» ասելով,

² Ռուսական մասնագիտական ուսումնասիրություններում այդ հարցին անդրադարձել են Ֆիրսովը և Խոլըստովան, Պավլենկը և Գուսյակովան, ինչպես նաև բազմաթիվ երիտասարդ մասնագետներ, տե՛ս Фирсов М. В., Студенова Е. Г., Теория социальной работы. М., 2001, Холостова Е. И., Основы социальной работы: Учебник, М., Юристъ, 2005, Основы социальной работы, под ред. проф. П. Д. Навлинка, 4 изд., М., 2015, Григорьевна М. И., Социальная работа как вид деятельности: проблема методологического анализа – Вестник иркутского университета, 2009, Выпуск 4 (6), էջ 134-139, Никитин В. А., Состояние и проблемы развития теории социальной работы в России – Знание. Понимание. Умение, 2006, հ. 4, էջ 134-142 և այլն:

ստույգ ու հենց ըստ Եության՝ որպես այդպիսին նկատի ունենալով՝ «կարիքային եխմնախնդիրը»։ Եվ ի՞նչ ենք հասկանում ասելով՝ «խնդրակարգ» և կոնկրետորեն՝ «սոցիալականորեն նշանակալի խնդրակարգ»։

«Հիմնախնդիր» հասկացությունը բարգմանուրյունն է եին հունարեն (πρόβλημα) բարի և նշանակում է բարդ տեսական կամ գործնական հարցադրում, որը կարիք ունի հետազոտվելու և հաղթահարման համար նոր գաղափարներ, ուղիներ մշակելով³։ Գիտությունը կամ գիտական հետազոտությունը հետամուտ է ուսումնասիրության ենթակա ամենայն գոյի որևէ մասնավոր ոլորտի որպիսության բացահայտմանը, ինչը և ներկայանում է որպես բազմարությանդակ ու մեկ-միասնական խնդրակարգ։ Իսկ խնդրակարգն իրենում բովանդակում է միմյանց նկատմամբ ներկարգավորությամբ հետևողական ու փոխականանող հիմնորոշ խնդրաշար։ Եվ հարկ է նշել, որ ոչ միայն գիտական հետազոտությունը, այլև ամենայն ուսուցակարգային շարադրանք (դասագիրք, ուսումնամեթոդական ձեռնարկ...) և ծավալվում է ուսումնասիրվող «նյութի ու բանի» որպիսության բացահայտման խնդրակարգի ու հետազոտական ուղու ներկարգավոր ու հետևողականորեն հաջորդական ընթացքով։ Իսկ ընդհանրապես՝ կրթական կարիքով ու դիտավորությամբ ստեղծված ողջ մասնագիտական գրականության՝ դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, և կոնկրետորեն ամենայն սոցիալական գիտությունների ուսուցակարգային շարադրանքի կրծումն է աշխարհում մարդկային կյանքի տեսական ու գործնական իմաստության հասկացման ու կենագործման ձգողող ընթերցանության ուսումնասությին մատչելի դարձնել գիտական ու հոգևոր-բաղադրակրթական նախկին ու նաև նոր ձեռքբերումներ՝ մարդկային բանական հոգին ու միտքը կրթերակ ուսումնառու ստեղծագործականության։

Ամենայն կամ որիցեւ մասնավոր գոյի և այդ թվում նաև ամենայն գիտությունների գոյության որպիսությունն ուսումնասիրել՝ կնշանակի

³ Հումանիտար գիտություններում ստեղծվել մշակվել ու կատարելագործվել են խնդիրների բացահայտման, մեկնաբանման, լուծման վերաբերյալ բազմաթիվ տեսություններ, որոնց մոտեցումները և սկզբունքները նշանակալի են նաև սոցիալական աշխատանքի ոլորտում տէ և Ջ. Դյու, Փсихология и педагогика мышления. (Как мы мыслим.) Перевод с английского Н. М. Никольской. Редакция Ю.С. Рассказова, Издательство "Лабиринт", М., 1999, Osborn A., Applied Imagination. Principles and Procedures of Creative Thinking. Scribner, New York, 1957, Gordon W., Syneccics. The Development of Creative Capacity. Harper, New York. 1961:

հարցադրել և քննա-խորհրդածությամբ հասկանալ ու մեկնորշել դրանց որպես աղղախին գոյության իսկությունը: Մարդկային ինքնուրբունն ու կեցողությունն աշխարհում որպես աղղախին իր իսկ բնության յուրահատկությամբ կայացնող, հացնող է հասկացման ու մեկնորշման ձգուումն ու ջանքը, որոնց բուն կրչումն ու սկզբունքորեն ուղղորդվածությունն է՝ բացահայտել իսկությունը⁴: Ամենայն գիտություն սկզբունքորեն քննում է իրավես գոյություն ունեցողը և բացահայտում գոյի գոյության ճշմարտությունը, նույնն է թե ասել՝ իսկությունը: Ըստհանրապես, մտքի բուն կրչումն է՝ մասածել գոյի գոյությունը և բացահայտել իսկությունը, որ և այն իրազործում է՝ կայանալով որպես բանական արվեստ ու գիտություն և կռնկրեսորեն՝ նաև սոցիալական գիտություն:

Ասս՝ հարկ է նաև ամրագրել, որ որևիցե գոյի կամ գործի որպիսությունը բացահայտել կնշանակի բացահայտել նշանակություններ կամ իմաստներ: Ամենայն գիտություն ու նաև սոցիալական գիտություն տեսական իր գործառությունը իրագործելով իր նպատակը՝ իսկության բացահայտումը, ըստ եռթյան, գործ է ունենում իմաստի եռակի հնարավորության հետ: Եզ ամենայն գոյի կամ իրողությունների որպիսության առնչությամբ բացահայտվող իմաստը կարող է լինել եռակի հնարավորությամբ՝ թերիմաստ, թյուրիմաստ և, վերջապես, ճշմարիտ իմաստ, ասել է թե՝ բուն իսկությունը հայտն իմաստ, որի հետ և գործ ունի գիտական հետազոտությունն ու գիտությունը: Գիտության կրչումը և ըստ այդմ՝ դիտավորությունը, կերպարանաւումն ու կատարաւումն է՝ խորհրդածությամբ հասկանալ ու մեկնորշել ամենայն գոյի որպես աղղախին գոյության իսկությունը հայտն իմաստը և այդ իմաստում պահյալ իմաստության խորհուրդը: Արդարեւ, ճանաչել կամ հասկանալ որևիցե իրողություն՝ կնշանակի հասու լինել դրա իսկությունը հայտորոշող իմաստին ու այդ իմաստում պահյալ իմաստության խորհուրդին և այդկերպ՝ կատարելագործվել ու կայանալ որպես հենց իմաստության գիտելիք: Գիտությունն այնժամ, այնկերպ ու այնչափ է ճշմարտությամբ գիտություն, երբ սկզբունքորեն դիտավորություն ու կատարում ունի՝ հասկանալ ու բացահայտել իմաստություն, այդկերպ՝ ինքնահասկանալով, կատարելագործվելով

⁴ «Իսկություն» հասկացության մասին մաերամասն տե՛ս Քոչարյան Ռ., Հանս-Գեորգ Գաղամերի փիլիսոփայական հերմենունտիկան, ԳԱԹ հրատարակչություն, Եր., 2006, էջ 28, ծանոթ. 16a:

ու կայանալով որպես աստվածային ու մարդկային իրողությունների և կամ ամենայն գոյի գոյության որևէ մասնավոր ոլորտի **հսկությունը հայտող իմաստի, որում և՝ իմաստության գիտություն**:

Քանզի իր իսկությունն իրենում ունեցող և ուրեմն՝ իսկական ու կատարելության ձգտող գիտությունը հենց իմաստության գիտություն է:

Եվ եթե գիտությունն ու մասնավորապես՝ սոցիալական գիտությունը հետամուտ չէ իմաստության ու հենց իմաստության գիտություն չէ, ապա՝ զգիտի և որևէ ինչ ու զգիտի իսկություն և այն ամենը, ինչը կարծում ու հավակնում է, թե՝ զգիտի, սխալ զգիտի: Արդարեւ, եթե գիտությունն ու մասնավորապես՝ սոցիալական գիտությունը զգիտի իսկություն ու իմաստություն, չգիտի և ոչինչ, և այն, ինչը կարծում է, թե՝ զգիտի, չգիտի այնպես, ինչպես **պիտու** եր գիտենալ:

Արդ սոցիալական գիտության և, մասնավորապես, «սոցիալական աշխատանք» գիտակարգի համար ևս իր սկզբունքային խնդրակարգի լուծումը՝ «իսկությունը հայտող իմաստի, որում և իմաստության խորհուրդի հասկացումն ու մեկնողաբար բացորշումը», ի՞նչ ուղենշմամբ և բաղադրատարը խնդիրների ինչպիսի կարգավորությամբ է իրագործելի դառնում: Հարցերի ինչպիսի ընթացակարգով կամ ի՞նչ խնդրակարգով է անհրաժեշտ ու նախընտրելի կազմակերպել ամենայն կամ որեւոր մասնավոր գոյի, իրողությունների որպիսության ուսումնասիրությունը: Որևէ՝ գոյի գոյությունը ըննելու և իսկությունը բացահայտելու համար անհրաժեշտ ու նախընտրելիորեն պիտոյական է առաջնորդվել և որոնումն իրագործել ու ավարտուն կատարումի հասցնել Դավիթ Անհարթի կողմից նշվող հետևյալ չորս հիմնահարցերի ներկարգավոր հետևողականությամբ ամբողջական խնդրակարգով՝ ա) «գոյություն ունի՝, արդյոք», բ) «ի՞նչ է», գ) «ինչպիսի ինչ է», դ) «ինչո՞ւ և համար է»⁵:

⁵ Սոցիալական աշխատանքի որպես գիտության ու արվեստի և հենց որպես պրակտիկ իմաստության մասին տե՛ս Զիջայ Ա., «Հնգածությունը» որպես ունիվերսալ ինսենցիա ու եկամ սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի փոխհարդրողակցության՝ «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», գիտաժողովի կողմէր, գիրք IV, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, «Լիմուշ», Եր., 2014, էջ 139, Զիջայ Ա., Քոչարյան Ռ., Սոցիալական աշխատանքը, բարեգրծությունը և «քրիստոնեական կենսակերպի արմատակիրումը», «ԱԱԸ», Եր., 2009, էջ 37, 91-93, 147, ուժ և նաև England Hugh, Social work as art, London, Allen & Unwin, 1986.p. 73-101, Patricia L. Samson Practice wisdom: the art and science of social work, Journal of social work practice, vol. 29, 2015, p. 119-131:

⁶ Տե՛ս Դավիթ Անհարթ. Սահման իմաստասիրութեան – Երկասիրութիւնը փիլիսոփայականը, աշխ. Ա. Արևշաղյանի, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Եր., 1980, էջ 29:

Ահավասիկ, նաև հենց «սոցիալական աշխատանքի» գոյության որպիսությունը քննելու և բացահայտելու համար անհրաժեշտ ու նախընտրելի է առաջնորդվել այդ խնդրակարգով.

- ա) գոյություն ունի⁹, արդյոք, սոցիալական աշխատանքը,
- բ) «ի նշ է սոցիալական աշխատանքը»,
- գ) «ինչպիսի ինչ է սոցիալական աշխատանքը»,
- դ) «ինչի համար է սոցիալական աշխատանքը»:

Առաջին հարցը՝ «գոյություն ունի⁹, արդյոք, սոցիալական աշխատանքը» կարող է նաև զարմանք հարուցել: Ֆ¹⁰ որ ավելի քան հարյուրամյակ մարդկության կյանքում իր հենց այդ անվանումով գոյություն ունի «սոցիալական աշխատանքը» և ուրեմն նրա գոյության մասին հարցն առնվազն ավելորդ կարելի է համարել: Սակայն մարդկության կյանքում մտքով ու հոգով ստեղծված ոչ ամենայնն է իրական: Գիտությունը միտք է, ստեղծված է հենց մտքով, «մակամտածական» է (Դավիթ Անհաղթի հասկացությունն է՝ մտքից է մակածված, և սակայն, նրա գոյությունն իրական է: Զգացմունքը ստեղծված է հոգով և նույնպես իրականորեն գոյություն ունի: Դրա հետ մեկտեղ կան նաև մարդկային բանական հոգով ու մտքով ստեղծված և, սակայն, գոյություն չունեցող, առասպելական կամ դիցաբանական հորինվածքներ գրւտ մտացածին ու պատրանքային: Օրինակ՝ արալեզը, հավերժահարսերը, կենտավրը և այլն: Արդ՝ պատասխանելով առաջնային ու հենց առաջին հարցին, թե՝ «գոյություն ունի⁹, արդյոք, սոցիալական աշխատանքը», հարկ է պատասխանել, որ այն գոյություն ունի և իր գոյության համար ունի իրական, այսինքն՝ նույնորեն գոյություն ունեցող հիմքեր: Եվ առաջնահերթորեն հարց տալով «սոցիալական աշխատանքի» գոյության մասին, արդյունքում բացահայտվում են այն հիմքերը, որոնք և անհրաժեշտորեն ու օբյեկտիվորեն գոյության են կոչում, սկզբունքորեն հնարավորում ու ապահովում ընդհանրապես, «սոցիալական աշխատանքը որպես այդպիսին» ու, մասնավորապես, հենց տվյալ որոշակիորեն կրնկրեա մոդուլը: Առաջին հարցը սոցիալական աշխատանքի որպես այդպիսին գոյության իսկության բացահայտման համար ունի ելավետային նշանակություն և իսկության դրւող բանադի ու սեփական իմաստ բացահայտող քննության ու խորհրդածության սկիզբ է: Իսկ գոյություն ունենալու հարցի հետ մեկտեղ ու հաջորդական է նաև հարցադրել, որ «եթե այս, գոյություն ունի, ապա՝ ինչպես ս գոյություն ունի սոցիալական աշխատանքը որպես այդպիսին» և

թե՝ «ինչպիսի՞ն է սոցիալական աշխատանքի գոյության յուրահատուկ, սեփական մողուսը», կամ ըստ կանտյան հարցադրման՝ «ինչպէ՞ս է հնարավոր սոցիալական աշխատանքի գոյությունը որպես զիսություն» և նույնիսկ վերջինը, ըստ հեղինակների միասնական տեսակետի, առավել ճշգրտող ու կատարելագործող լրացմամբ՝ «ինչպէ՞ս է սկզբունքորեն հնարավոր, անհրաժեշտ ու նաև նախընտրելիորեն պիտոյական սոցիալական աշխատանքի գոյությունը որպես այդպիսին»։ Կարելի է աստ ամրագրել, որ որևէ գոյի գոյությունը ու կոնկրետորեն հենց սոցիալական աշխատանքի գոյությունը հարցադրելով և նկատենք, որ դեռ մրայն գոյություն ունենալը ու հաջորդիվ՝ այդ գոյության կերպը, այսինքն՝ «ինչպէ՞ս»-ը (սոցիալական աշխատանքի «ինչպէ՞ս» գոյությունը) հարցադրելով, հնարավոր չէ առանձին պատասխանել այդ հարցին՝ շառնշելով այն հարցին, թե՝ ի՞նչ է այն իրողությունը, որի գոյության կերպը կամենում ենք բացորոշել։ Չէ՞ որ գոյի, իրի կամ իրողության «ի՞նչ» բնությունը պայմանավորում է այդ «ինչ»-ին աղեկված «ինչ-պես» գոյությունը։

Սոցիալական աշխատանքի առաջին՝ գոյության վերաբերյալ հարցի դրական պատասխանի դեպքում հետևողական է արդեն նաև առաջադրել երկրորդ հարցը՝ «ի՞նչ է սոցիալական աշխատանքը» և ապա երրորդ հարցը՝ «ինչպիսի՞ ինչ է սոցիալական աշխատանքը», կամ որ նույնն է՝ «որպես ի՞նչ գոյություն ունի սոցիալական աշխատանքը», որոնց ստույգ պատասխանը հենց սոցիալական աշխատանքը որպես այդպիսին բաղկացնող, գոյացնող կամ եացնող և ուրեմն՝ եական ու այդկերպ՝ գոյավոր այլ ամենից զանազանող առանձնահատկությունների ուսումնասիրությունն ու բացահայտումն է, նաև այդ հիմնորոշ առանձնահատկություններն ի մի բերող կարձառու սահմանումն ու մանրամասն մեկնաբանությունը։

Չորրորդ հարցի՝ «ինչի՞ համար է սոցիալական աշխատանքը» և ըստ այդմ՝ «ի՞նչ նպատակով ու իմաստավորվածությամբ գոյություն ունի սոցիալական աշխատանքը» հարցադրությանը ստույգ պատասխանով բացորոշվում է սոցիալական աշխատանքի որպես այդպիսին գոյության բուն կոչումը, նպատակն ու նաև մարդկանց կյանքում նշանակալիությունը։

Նշված չորս հարցադրումներով ամբողջացող նպատակային խնդրակարգի համաձայն իրազրծելով ուսումնասիրությունը, բացահայտելի է դառնում սոցիալական աշխատանքի բնությունը,

այսինքն՝ սոցիալական աշխատանքի որպիսությունը՝ որպես այդպիսին գոյության իսկությունը: Իսկ բացահայտել սոցիալական աշխատանքի իսկությունը հայտնող իմաստը, կնշանակի բացահայտել նրա գոյության հենց սեփական իմաստը:

Նարկ է նշել, որ սոցիալական աշխատանքի բնությունը և ուրեմն՝ սոցիալական աշխատանքի որպես այդպիսին գոյության իսկությունը հենարավոր է բացրոշել նաև հարցադրումների մեկ այլ ընթացակարգով՝

1. բացահայտելով սոցիալական աշխատանքի գոյությունը որպես այդպիսին հիմնադրող կոչմամբ,

2. ըստ այդ կոչման՝ բացրոշելով սոցիալական աշխատանքի դիտավորությունն ու դրա հիմնախնդիրները,

3. ըստ դիտավորության՝ բացրոշելով սոցիալական աշխատանքի կերպարանումը (պոտենցիան), ինչպես նաև դիտավորությանը համապատասխանության տեսակետից թերի և-կամ թյուր կերպարանումը,

4. ըստ դիտավորության՝ բացրոշելով սոցիալական աշխատանքի անհրաժեշտորեն ու նախընտրելիորեն պիտոյական կատարումը, ինչպես նաև բացրոշելով դիտավորությանը համապատասխանության տեսակետից թերի և-կամ թյուր կերպով կոնկրետորեն իրագործված (ակտուալացած) կատարումը:

Այսկերպ հնարավոր է դառնում հասկանալ ու մեկնարաբար բացրոշել սոցիալական աշխատանքի՝ իր կոչմանը համապատասխան իսկական գոյությունը ու նաև բացրոշել տվյալ ներկայում ու տվյալ կոնկրետությամբ իրագործված՝ իր կոչմանը անհամապատասխան նրա անհսկական գոյությունը: Հերմեննստիլվայի հայեցակարգով խնդրո նյութի ընությունը, ըստ եռթյան, ուսումնասիրությունն իրականացնելով «ներսից», բացրոշելի է դարձնում ուսումնասիրվող ըներևույթների (Փենտմենների) գոյության իսկությունը և հնարավորություն ընձեռնում ճշմարտությամբ բացահայտել, թե արդյոք համապատասխան է սոցիալական աշխատանքի գործունեության պոտենցիան և կոնկրետ իրագործվածությունը՝ իրենց սկզբունքային դիտավորությանը, ինչպես նաև այդ բներևույթների կոնկրետ իրագործվածությունը՝ իրենց պոտենցիային:

Սոցիալական գիտության և կոնկրետորեն՝ սոցիալական աշխատանքի վերաբերյալ մասնագիտական գրականությունում և դասագրքերի շարադրանքում մարդկային հոգևոր-քաղաքակրթական ինքնության,

ընդհանուր կենսակարգի, անձանց ազատակամորեն ընտրյալ ու անձնավորյալ կենսակերպի ու բազմաբռվանդակ գործունեության (թէ՝ իրավես առկա և թէ՝ սկզբունքորեն անհրաժեշտ ու նախընտրելի ոչ միշտ ու ոչ լիովին առկա) որպիսությունը քննելիս «խնդիր», «հիմնախնդիր» և «խնդրակարգ» հասկացությունները գործածվում են նաև այլ նշանակությամբ: Եվ աստ սոցիալականորեն նշանակալի «հիմնախնդիր» ու առավել ճշգրիտ՝ «կարիքային հիմնախնդիր», ինչպես նաև «խնդրակարգ» ասելով ու նկատի ունենալով այդ բնույթի խնդիրներների ներկարգավոր բաղադրակազմ, հասկանում ենք խորհրդառուի մոտ առաջացած մի իրավիճակ, որի հաղթահարման համար իր ունեցած առկա ներքին կամ արտաքին ռեսուրսները, շփման հմտությունները, փոխհարաբերությունների հաստատաման հայտնի ձևերը այլևս արդյունավետ չեն և ցանկալի արդյունքի չեն հասցնում: Սոցիալական կյանքի նկատմամբ «խնդիր», «հիմնախնդիր» կամ «կարիքային հիմնախնդիր» հասկացությունների կիրառության մեջ հարկ է նկատի ունենալ, որ «խնդիրն» իր բնույթով առավել պարզ է ու իր լուծման կամ հաղթահարման համար անհրաժեշտ տեսական ու գործնական գիտելիքներում՝ համեմատաբար մատչելի ու ոյուրին, իսկ սոցիալականորեն նշանակալի «հիմնախնդիրը» կամ «կարիքային հիմնախնդիրը» բարդ ու դժվարալույթ է և խորհրդառուի առկա կարողությունների սահմաններում՝ անհաղթահարելի: Անակասիկ, սոցիալականորեն նշանակալի «հիմնախնդիրը» կամ «կարիքային հիմնախնդիրը» տարբերվում է «խնդրից» հենց նրանով, որ առաջնի լուծման կամ հաղթահարման համար անհրաժեշտ է նոր ռեսուրսների բացահայտում:

Սոցիալական աշխատանքի որպիսությունը քննելիս՝ սոցիալականորեն նշանակալի «խնդիր», «հիմնախնդիր» կամ «խնդրակարգ» հասկացությունները գործածվում են նաև սոցիալական աշխատանքի տեսա-գործնական երկմիասնական բնության բաղադրակազմությունում կամ գործընթացի փուլերում և այդկերպ ներկայանում որպես կարիքավորության կամ աջակցության ուղու տեսականորեն բացահայտման և ապա՝ իրագործման «խնդիր», «հիմնախնդիր» ու «խնդրակարգ»:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սոցիալական աշխատանքի ներկայությունը որպես գիտակարգ և մասնագիտական գործունեություն՝ պահանջում է ուսումնասիրել իր

ուրույն առարկայական տիրուվթը: Հողվածում քննարկվում է սոցիալական աշխատանքի խնդրակարգի հերմենուսիկական վերլուծության մեթոդաբանական սկզբունքները՝ դիտավորությունը, կերպարանումը և կատարումը:

Բանալի բառեր. հիմնախնդիր, խնդրակարգ, խսկություն, մեթոդաբանություն:

ПРОБЛЕМАТИКА СОЦИАЛЬНОЙ РАБОТЫ

Анаит Джиджян

*Кандидат философских наук, доцент,
АГПУ им. Х. Абовяна*

Ромик Кочарян

*Кандидат философских наук,
старший научный сотрудник «Матенадарана» имени Маштоца*

РЕЗЮМЕ

Присутствие социальной работы как научной и профессиональной деятельности требует изучения её конкретной предметной области. В статье рассматриваются методологические принципы герменевтического анализа проблематики социальной работы.

Ключевые слова: проблема, проблематика, истина, методология.

PROBLEMATICS OF SOCIAL WORK

Anahit Jijyan

*Candidate of Philosophy, Associate Professor,
ASPU after Kh. Abovyan*

Romik Kocharyan,

*Candidate of Philosophy,
Senior Researcher of the «Matenadaran» after Mashtots*

SUMMARY

The presence of social work as of a science and professional activity requires the study of its specific subject area. The article discusses the methodological principles of the hermeneutical analysis of the social work.

Keywords: problem, problematics, truth, methodology.